

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ
(2020-2025)**

**ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2026**

ՀՏԴ 378.4(479.25)
ԳՄԴ 74.480.4(5Հ)
Ե 813

Հեղինակային կազմ՝ Հ. Վ. Հովհաննիսյան, Է. Վ. Ասրիյան, Ռ. Հ. Բարխուդարյան, Ա. Ս. Բուդաղյան, Մ. Գ. Սանթրոջյան, Ա. Ն. Սարգսյան, Տ. Ս. Գալստյան

Ե 813 Երևանի պետական համալսարանի գործունեության առանցքային ցուցանիշները (2020-2025).-Եր.: ԵՊՀ հրատ., 2026.- 90 էջ:

Սույն ձեռնարկի նպատակը տարբեր ոլորտներում ԵՊՀ գործունեության արդյունքների ուսումնասիրումն ու գնահատումն է ընդունված ցուցանիշների լրակազմի միջոցով: Ներկայացված են ԵՊՀ գործունեության հիմնական վեց ոլորտներում գործունեության առանցքային ցուցանիշները վերջին հինգ տարիների (2020-2025) համար: Դրանք մատնանշում են ԵՊՀ ձեռքբերումները և բարելավման կարիք ունեցող կողմերը՝ համալսարանի հետագա գործունեությունն ավելի նպատակաուղղված ու արդյունավետ կազմակերպելու, ինչպես նաև զարգացման ռազմավարությունն ուղղորդելու համար:

Հասցեագրվում է ԵՊՀ կառույցներին, որոնք ներգրավված են համալսարանի և նրա ստորաբաժանումների կառավարման ու պլանավորման գործընթացներում:

ՀՏԴ 378.4(479.25)

ԳՄԴ 74.480.4(5Հ)

ISBN 978-5-8084-2751-8

© ԵՊՀ հրատ., 2026

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բնագավառ 1. Ընդունելություն և ուսանողական համակազմ	5
Բնագավառ 2. Կրթական գործընթաց	27
Բնագավառ 3. Ռեսուրսներ և կառավարում	45
Բնագավառ 4. Ենթակառուցվածքներ	57
Բնագավառ 5. Գիտություն ու հետազոտություն.....	70
Բնագավառ 6. Արտաքին կապեր ու միջազգային համագործակցություն	83

ՆԱԽԱԲԱՆ

«Երևանի պետական համալսարանի գործունեության առանցքային ցուցանիշները» վերլուծական ձեռնարկում ներկայացված են Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) գործունեության առանցքային ցուցանիշները (ԳԱՑ) 2020-2025 թվականների համար:

ԵՊՀ-ի համար ԳԱՑ-երն ունեն կրկնակի նշանակություն: Նախ դրանք ծառայում են ԵՊՀ գործունեության ինքնավերլուծության ու արդյունավետության գնահատման համար: Մյուս կողմից էլ դրանք օգտագործվում են ԵՊՀ ռազմավարական պլանավորման գործընթացում՝ ներքին միջավայրային վերլուծության ու տվյալահեն որոշումների կայացման համար:

ԳԱՑ-երի օգտագործումը ԵՊՀ-ին հնարավորություն է տալիս նաև գործունեության հիմնական ոլորտներում իրականացնելու առաջավոր փորձի համեմատական վերլուծություն (բենչմարքինգ), ինչպես նաև համեմատելու նախորդ տարիների ու ապագայի համար պլանավորած ցուցանիշները:

ԵՊՀ ԳԱՑ-երի ցանկը կազմելիս նախ որոշվել են ԵՊՀ գործունեության 6 հիմնական ոլորտները.

1. ընդունելություն ու ուսանողական համակազմ,
2. կրթական գործընթաց,
3. ռեսուրսներ ու կառավարում,
4. ենթակառուցվածքներ,
5. գիտություն ու հետազոտություն,
6. արտաքին կապեր ու միջազգային համագործակցություն:

Այնուհետև յուրաքանչյուր ոլորտի համար սահմանվել են գործունեության առանցքային ցուցանիշները: ԵՊՀ ԳԱՑ-երի համապարփակ ցանկը բաղկացած է 78 ցուցանիշից, որոնք դասակարգված են ըստ ԵՊՀ գործունեության հիմնական ոլորտների:

Սույն վերլուծական ձեռնարկը հասցեագրվում է ԵՊՀ ու նրա ստորաբաժանումների վարչակազմին, ինչպես նաև բոլոր այն կառույցներին, որոնք ներգրավված են կառավարման ու պլանավորման գործընթացներում:

Բնագավառ 1. Ընդունելություն և ուսանողական համակազմ

Ցուցանիշ 1.1. Առկա ուսուցման բակալավրիատի դիմորդների բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի դիմորդների ընդհանուր հոսքում 6

Ցուցանիշ 1.2. Առկա ուսուցման դիմորդների թիվն ըստ կրթական աստիճանների և ուղղությունների 7

Ցուցանիշ 1.3. Առկա ուսուցման բակալավրիատի ընդունելության բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի ընդհանուր ծավալում 9

Ցուցանիշ 1.4. Առկա ուսուցմամբ բակալավրիատի դիմորդների բաշխումն ըստ մարզերի 10

Ցուցանիշ 1.5. Առկա ուսուցման ընդունելությունն ըստ կրթական աստիճանների 11

Ցուցանիշ 1.6. Առկա ուսուցման դիմորդների և ընդունվածների թվի հարաբերակցությունը 12

Ցուցանիշ 1.7. Առկա ուսուցման բակալավրիատի արական և իգական սեռերի հաշվեկշիռը դիմորդների ու ընդունվածների ընդհանուր հոսքերում 13

Ցուցանիշ 1.8. Առկա ուսուցման օտարերկրյա դիմորդների և ընդունվածների թիվը 14

Ցուցանիշ 1.9. Հեռակա ուսուցման հայտարարված ընդունելության, դիմորդների և ընդունվածների թվի հարաբերակցությունը 15

Ցուցանիշ 1.10.1. Առկա ուսուցման ուսանողական համակազմը 16

Ցուցանիշ 1.10.2. Հեռակա ուսուցման ուսանողական համակազմը 17

Ցուցանիշ 1.10.3. Ընդհանուր ուսանողական համակազմը 18

Ցուցանիշ 1.11. Առկա ուսուցման մագիստրատուրա և ասպիրանտուրա ընդունվածների ու շրջանավարտների հարաբերակցությունը 19

Ցուցանիշ 1.12. Մագիստրոսական և ասպիրանտական համակազմերի հաշվեկշիռն ընդհանուր համակազմում 20

Ցուցանիշ 1.13. Ասպիրանտական համակազմ և հայցորդներ 21

Ցուցանիշ 1.14.1. Առկա ուսուցման օտարերկրյա ուսանողների համակազմը և հաշվեկշիռն առկա ուսուցման ուսանողական համակազմում 22

Ցուցանիշ 1.14.2. Հեռակա ուսուցման օտարերկրյա ուսանողների համակազմը և հաշվեկշիռը հեռակա ուսուցման ուսանողական համակազմում 23

Ցուցանիշ 1.15. Հեռակա ուսուցման համակազմը և հաշվեկշիռն ընդհանուր ուսանողական համակազմում 24


Ցուցանիշ 1.16.1. Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռն ընդունելության ծավալում՝ ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի 25

Ցուցանիշ 1.16.2. Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռն ընդհանուր ուսանողական համակազմում՝ ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի 26

Ցուցանիշ 1.1. Առկա ուսուցման բակալավրիատի դիմորդների բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի դիմորդների ընդհանուր հոսքում

	2020	2021	2022	2023	2024
ՀՀ շրջանավարտների թիվը	21221	21224	21226	21229	21507
ՀՀ դիմորդների թիվը	11967	13126	13888	13417	14242
ԵՊՀ դիմորդների թիվը	4066	3075	2923	3189	3437
ԵՊՀ դիմորդների բաժնեմասը ՀՀ դիմորդների թվում	34%	23%	21%	24%	24%
ԵՊՀ դիմորդների բաժնեմասը ՀՀ շրջանավարտների թվում	19%	14%	14%	15%	16%

2020-2024 թվականներին ՀՀ շրջանավարտների ընդհանուր թիվը տարեցտարի աճել է, ըստ այդմ՝ 15 տոկոսով ավելացել է նաև դիմորդների թիվը: Նշված ժամանակահատվածում ԵՊՀ դիմորդների բաժնեմասը ՀՀ շրջանավարտների թվում կազմում է 14-19 տոկոս, իսկ դիմորդների թվում՝ շուրջ 23 տոկոս: Այս ժամանակահատվածում բացառություն է կազմում 2020 թվականը, երբ համապատասխանաբար ԵՊՀ դիմորդների բաժնեմասը ՀՀ դիմորդների թվում կազմել է 34 տոկոս, իսկ շրջանավարտների թվում՝ 19 տոկոս, ինչը պայմանավորված է COVID 19 համավարակի պայմաններում մեկ միասնական քննությամբ բուհ ընդունվելով:



Ցուցանիշ 1.2. Առկա ուսուցման դիմորդների թիվն ըստ կրթական աստիճանների և ուղղությունների

	2020	2021	2022	2023	2024
Դիմորդների թիվը	5349	4124	3825	4294	4621
Բակալավրիատ	4066	3075	2923	3189	3437
Հումանիտար մասնագիտություններ	1080	696	704	799	905
Հասարակագիտական մասնագիտություններ	1925	1410	1337	1492	1636
Ճշգրիտ մասնագիտություններ	859	788	747	774	737
Բնագիտական մասնագիտություններ	202	181	135	124	159
Մագիստրատուրա	1225	973	771	1015	1106
Հումանիտար մասնագիտություններ	261	226	173	233	255
Հասարակագիտական մասնագիտություններ	551	406	318	407	467
Ճշգրիտ մասնագիտություններ	202	187	160	217	232
Բնագիտական մասնագիտություններ	211	154	120	158	152
Ասպիրանտուրա	42	42	53	43	39
Հումանիտար մասնագիտություններ	10	8	12	8	8
Հասարակագիտական մասնագիտություններ	21	14	14	13	16
Ճշգրիտ մասնագիտություններ	10	15	21	12	8
Բնագիտական մասնագիտություններ	1	5	6	10	7
Հայցորդ	16	34	78	47	39
Հումանիտար մասնագիտություններ	6	12	35	25	15
Հասարակագիտական մասնագիտություններ	8	18	38	13	16
Ճշգրիտ մասնագիտություններ	1	2	1	1	2
Բնագիտական մասնագիտություններ	1	2	4	8	6

2021-2024 թվականների ընթացքում ԵՊՀ բակալավրիատ դիմորդների թիվը կայուն է և տատանվում է 3000-3400-ի սահմաններում, բացառություն է կազմում 2020 թվականը՝ 4066, ինչը պայմանավորված է արդեն իսկ նշված պատճառով: Նշված ժամանակահատվածում նկատելի է զգալի աճ հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների գծով: Ճշգրիտ մասնագիտությունների գծով դիմորդների թիվը գտնվում է 737-788-ի միջակայքում, իսկ բնակագիտական մասնագիտությունների գծով 2024 թվականին արձանագրվել է որոշակի աճ՝ պայմանավորված որոշ մասնագիտությունների համար ՀՀ Կառավարության կողմից բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական և մաթեմատիկական (ԲՏՃՄ) ուղղություններով պետության համար առաջնահերթ ու կարևորություն ներկայացնող մասնագիտություններով՝ ըստ կրթական աստիճանների (բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա), համապատասխան բուհերում առկա ուսուցմամբ պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) ընդունված քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքով:

Առկա ուսուցման դիմորդների թիվը




Ցուցանիշ 1.3. Առկա ուսուցման բակալավրիատի ընդունելության բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի ընդհանուր ծավալում

	2020	2021	2022	2023	2024
Կենտրոնացված ընդունելության ծավալը	9178	9089	8268	8583	8721
ԵՊՀ ընդունվածների թիվը	2687	2615	2354	2390	2414
ԵՊՀ ընդունելության բաժնեմասը	29%	29%	28%	28%	28%

Վերջին 5 տարիների ընթացքում ԵՊՀ ընդունելության բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի ծավալում կայուն է և կազում է 28-29 տոկոս:

ԵՊՀ ընդունելության բաժնեմասը




Ցուցանիշ 1.4. Առկա ուսուցմամբ բակալավրիատի դիմորդների բաշխումն ըստ մարզերի

	2020		2021		2022		2023		2024	
Երևան	1741	42.8	1256	40.8	1356	46.4	1296	40.6	1470	42.8
Կոտայք	383	9.4	327	10.6	275	9.4	275	8.6	345	10
Գեղարքունիք	274	6.7	209	6.8	184	6.3	183	5.7	217	6.3
Լոռի	191	4.7	143	4.7	121	4.1	141	4.4	141	4.1
Արարատ	297	7.3	239	7.8	224	7.7	225	7.1	248	7.2
Շիրակ	247	6.1	177	5.8	136	4.7	204	6.4	235	6.8
Արմավիր	276	6.8	207	6.7	183	6.3	236	7.4	243	7.1
Արագածոտն	194	4.8	149	4.8	131	4.5	158	5	138	4
Սյունիք	195	4.8	159	5.2	133	4.6	133	4.2	163	4.7
Տավուշ	121	3	102	3.3	98	3.4	127	4	115	3.3
Վայոց ձոր	62	1.5	46	1.5	30	1	56	1.8	52	1.5
Այլ	85	2.1	61	2	52	1.8	155	4.9	70	2
Ընդամենը	4066		3075		2923		3189		3437	

Վերջին հինգ տարիների ընթացքում առկա ուսուցմամբ ԵՊՀ բակալավրիատի դիմորդների 41-46 տոկոսը Երևանից է: Նույն ժամանակահատվածում դիմորդների թվով առաջատարներն են Կոտայքը, Արարատը, Արմավիրը և Շիրակը:

2020, 2021, 2022, 2023, 2024




Ցուցանիշ 1.5. Առկա ուսուցման ընդունելությունն ըստ կրթական աստիճանների

	2020	2021	2022	2023	2024
Ընդունվածների թիվը	3719	3525	3143	3332	3399
Բակալավրիատ	2687	2615	2354	2390	2414
Անվճար	407	446	427	493	485
Վճարովի	2280	2169	1927	1897	1929
Մագիստրատուրա	974	834	658	852	907
Անվճար	306	312	291	286	292
Վճարովի	668	522	367	566	615
Ասպիրանտուրա	42	42	53	43	39
Անվճար	40	39	46	40	37
Վճարովի	2	3	7	3	2
Հայցորդ	16	34	78	47	39
Վճարովի	16	34	78	47	39

2021-2024 թվականների ընթացքում բակալավրիատ ընդունվածների թիվը տատանվում է 3000-3500-ի շրջանակում, բացառություն է կազմում միայն 2020 թվական՝ 3700: Մագիստրատուրա ընդունվածների թիվը 2024 թվականին 2021-ի համեմատ աճել է շուրջ 9 տոկոսով:


Առկա ուսուցման ընդունելությունը



Ցուցանիշ 1.6. Առկա ուսուցման դիմորդների և ընդունվածների թվի հարաբերակցությունը


	2020	2021	2022	2023	2024
Բակալավրիատի հայտարարված ընդունելության թիվը	2686	2846	2916	2461	2382
Բակալավրիատի դիմորդների թիվը	4066	3075	2923	3189	3437
Ընդունվածների թիվը	2687	2615	2354	2390	2414
Դիմորդ/ընդունված հարաբերակցությունը (բակալավրիատ)	1.51	1.18	1.24	1.33	1.42
Հայտարարված ընդունելության տեղեր/ընդունված հարաբերակցությունը (բակալավրիատ)	1.00	1.09	1.24	1.03	0.99
Մագիստրատուրայի հայտարարված ընդունելության թիվը	1539	1507	1498	1198	1155
Մագիստրատուրայի դիմորդների թիվը	1227	980	737	1015	1113
Ընդունվածների թիվը	968	825	658	852	907
Դիմորդ/ընդունված հարաբերակցությունը (մագիստրատուրա)	1.27	1.19	1.12	1.19	1.23
Հայտարարված ընդունելության տեղեր/ընդունված հարաբերակցությունը (մագիստրատուրա)	1.59	1.83	2.28	1.41	1.27
Ասպիրանտուրայի հայտարարված ընդունելության թիվը	30	40	42	46	48
Ասպիրանտուրայի դիմորդների թիվը	76	57	54	45	37
Ընդունվածների թիվը	40	39	46	40	37
Դիմորդ/ընդունված հարաբերակցությունը (ասպիրանտուրա)	1.90	1.46	1.17	1.13	1.00
Հայտարարված ընդունելության տեղեր/ընդունված հարաբերակցությունը (ասպիրանտուրա)	0.75	1.03	0.91	1.15	1.30

2020-2024 թվականների ընթացքում մրցութային ցուցանիշը բակալավրիատում 0.99-1.24-ի միջակայքում է, իսկ մագիստրատուրայում՝ 1.27-2.28-ի: Նշված ժամանակահատվածում ասպիրանտուրայում այս ցուցանիշն աճել է՝ կազմելով 1.30:



Ցուցանիշ 1.7. Առկա ուսուցման բակալավրիատի արական և իգական սեռերի հաշվեկշիռը դիմորդների ու ընդունվածների ընդհանուր հոսքերում

	2020	2021	2022	2023	2024
Դիմորդների թիվը	4066	3075	2923	3189	3437
Արական սեռի դիմորդների թիվը	1421	1137	1081	1165	1229
Իգական սեռի դիմորդների թիվը	2645	1938	1842	2024	2208
Արական սեռի դիմորդների հաշվեկշիռը	35%	37%	37%	37%	36%
Իգական սեռի դիմորդների հաշվեկշիռը	65%	63%	63%	63%	64%
Ընդունվածների թիվը	2687	2615	2354	2390	2414
Արական սեռի ընդունվածների թիվը	790	784	765	698	832
Իգական սեռի ընդունվածների թիվը	1897	1831	1589	1692	1582
Արական սեռի ընդունվածների հաշվեկշիռը	29%	30%	32%	29%	34%
Իգական սեռի ընդունվածների հաշվեկշիռը	71%	70%	68%	71%	66%



2020-2024 թվականների ընթացքում արական և իգական սեռի դիմորդների հաշվեկշիռը դիմորդների թվում կայուն է. արական սեռի դեպքում այն կազմում է 35-37, իսկ իգական սեռի պարագայում՝ 63-65 տոկոս: 2020-2023 թթ. կայուն է նաև արական ու իգական սեռի ընդունվածների հաշվեկշիռը, որը համապատասխանաբար կազմում է 29-32 և 68-71 տոկոս: 2024 թվականին արական սեռի ընդունվածների հաշվեկշիռը 2020 թվականին համեմատ աճել է շուրջ 17 տոկոսով, իսկ իգական սեռի հաշվեկշիռը նույն ժամանակահատվածում նվազել է 7 տոկոսով:

Ցուցանիշ 1.8. Առկա ուսուցման օտարերկրյա* դիմորդների և ընդունվածների թիվը

	2020	2021	2022	2023	2024
Բակալավրիատ դիմորդների թիվը	59	55	58	81	79
Ընդունվածների թիվը	43	43	48	66	61
Մագիստրատուրայի դիմորդների թիվը	26	39	36	43	30
Ընդունվածների թիվը	20	31	31	37	24
Ասպիրանտուրայի դիմորդների թիվը	7	5	3	5	7
Ընդունվածների թիվը	6	4	2	4	5
Դիմորդների ընդհանուր թիվը	92	99	97	129	116
Ընդունվածների ընդհանուր թիվը	69	78	81	107	90


2020-2024 թթ. նկատելի է առկա ուսուցման համակարգի դիմորդների ընդհանուր թվի աճ կրթական բոլոր մակարդակներում: Ըստ այդմ՝ 2024 թվականին 2020-ի համեմատ դիմորդների ընդհանուր թիվն աճել է շուրջ 26 տոկոսով, համապատասխանաբար 30 տոկոսով ավելացել է նաև ընդունվածների թիվը:



* Բոլոր ցուցանիշներում օտարերկրյա քաղաքացիները ներկայացված են որպես ոչ կենտրոնացված համակարգի (այն է՝ հարցազրույց, նախապատրաստական դասընթացներ և այլն) դիմորդներ և ընդունվածներ:

Ցուցանիշ 1.9. Հեռակա ուսուցման հայտարարված ընդունելության, դիմորդների և ընդունվածների թվի հարաբերակցությունը

	2020	2021	2022	2023	2024
Բակալավրիատի հայտարարված ընդունելության թիվը	570	430	390	370	370
Բակալավրիատի դիմորդների թիվը	417	388	425	561	673
Ընդունվածների թիվը	312	283	262	350	371
Դիմորդ/ընդունված հարաբերակցությունը (բակալավրիատ)	1.34	1.37	1.62	1.60	1.81
Հայտարարված ընդունելության տեղեր/ընդունված հարաբերակցությունը (բակալավրիատ)	1.83	1.52	1.49	1.06	1.00
Մագիստրատուրայի դիմորդների թիվը	184	155	116	143	190
Ընդունվածների թիվը	173	145	115	116	160
Դիմորդ/ընդունված հարաբերակցությունը (մագիստրատուրա)	1.06	1.07	1.01	1.23	1.19
Ասպիրանտուրայի հայտարարված ընդունելության թիվը	13	9	16	14	30
Ասպիրանտուրայի դիմորդների թիվը	13	10	18	8	18
Ընդունվածների թիվը	41	8	16	8	18
Դիմորդ/ընդունված հարաբերակցությունը (ասպիրանտուրա)	0.32	1.25	1.13	1.00	1.00
Հայտարարված ընդունելության տեղեր/ընդունված հարաբերակցությունը (ասպիրանտուրա)	0.32	1.13	1.00	1.75	1.67




2020-2024 թվականների ընթացքում մրցութային ցուցանիշը հեռակա ուսուցման համակարգում բակալավրիատում 1.00-1.83-ի, իսկ մագիստրատուրայում՝ 1.01-1.23-ի միջակայքում է: Նշված ժամանակահատվածում ասպիրանտուրայում այս ցուցանիշն աստիճանաբար աճել է՝ 2023 և 2024 թվականներին համապատասխանաբար կազմելով՝ 1.75 ու 1.67:

Ցուցանիշ 1.10.1. Առկա ուսուցման ուսանողական համակազմը

	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Առկա ուսուցման ուսանողական համակազմը	10833	10318	10570	10400	10823
Բակալավրիատ	8579	8370	8881	8683	8899
Հումանիտար մասնագիտություններ	2435	2284	2442	2445	2558
Հասարակագիտական մասնագիտություններ	3643	3524	3779	3637	3663
Ճշգրիտ մասնագիտություններ	1744	1836	1948	2015	2102
Բնագիտական մասնագիտություններ	757	726	712	586	576
Մագիստրատուրա	1927	1618	1317	1304	1543
Հումանիտար մասնագիտություններ	539	412	352	319	391
Հասարակագիտական մասնագիտություններ	828	682	527	516	617
Ճշգրիտ մասնագիտություններ	278	267	241	253	303
Բնագիտական մասնագիտություններ	282	257	197	216	232
Ասպիրանտուրա	114	119	125	125	130
Հումանիտար մասնագիտություններ	36	35	37	37	39
Հասարակագիտական մասնագիտություններ	32	35	35	26	36
Ճշգրիտ մասնագիտություններ	17	15	18	25	36
Բնագիտական մասնագիտություններ	29	34	35	37	19
Օտարերկրյա ուսանողական համակազմը	213	211	247	288	251

2024/2025 ուսումնական տարում բակալավրիատի ուսանողական համակազմը 2021/2022-ի համեմատ աճել է շուրջ 6 տոկոսով: Պատկերն այլ է մագիստրատուրայում. 2020/2021 ուսումնական տարում ուսանողների թիվը բակալական մեծ է՝ 1927, իսկ հետագա տարիներին նկատվում է անկում, և միայն 2024/2025-ին արձանագրվել է շուրջ 17 տոկոս աճ:


Առկա ուսուցման ուսանողական համակազմը



Ցուցանիշ 1.10.2. Հեռակա ուսուցման ուսանողական համակազմը

	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Հեռակա ուսուցման ուսանողական համակազմը	2694	2350	2168	2257	2417
Բակալավրիատ	2063	1809	1734	1878	2039
Հումանիտար մասնագիտություններ	284	233	221	282	340
Հասարակագիտական մասնագիտություններ	1226	1077	1081	1168	1288
Ճշգրիտ մասնագիտություններ	211	192	170	163	164
Բնագիտական մասնագիտություններ	342	307	262	265	247
Մագիստրատուրա	492	448	349	295	294
Հումանիտար մասնագիտություններ	46	40	35	12	5
Հասարակագիտական մասնագիտություններ	446	398	304	274	289
Ճշգրիտ մասնագիտություններ	0	10	10	9	0
Բնագիտական մասնագիտություններ	0	0	0	0	0
Ասպիրանտուրա	118	82	53	54	57
Հումանիտար մասնագիտություններ	46	30	18	28	20
Հասարակագիտական մասնագիտություններ	43	31	19	10	21
Ճշգրիտ մասնագիտություններ	16	12	10	10	8
Բնագիտական մասնագիտություններ	13	9	6	6	8
Օտարերկրյա ուսանողական համակազմը	21	11	32	30	27

Հեռակա ուսուցման ուսանողական համակազմը



2020/21-2024/25 ուսումնական տարիներին հեռակա ուսուցման ուսանողական համակազմի թիվը տատանվում է 2168-2694-ի միջակայքում: Ըստ այդմ, այս համակազմում մեծ թիվ են կազմում բակալավրիատի ուսանողները՝ շուրջ 2000: Նշված ժամանակահատվածում մագիստրատուրայի և ասպիրանտուրայի սովորողների թիվը զգալիորեն նվազել է, համապատասխանաբար՝ 40 և 51 տոկոսով: Վերջին հինգ ուսումնական տարիների ընթացքում օտարերկրյա ուսանողական համակազմի թիվը տատանվում է 21-32-ի միջակայքում:

Ցուցանիշ 1.10.3. Ընդհանուր ուսանողական համակազմը

	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Ընդհանուր ուսանողական համակազմը	13527	12668	12738	12657	13240
Բակալավրիատ	10642	10179	10615	10561	10938
<i>Առկա ուսուցում</i>	<i>8579</i>	<i>8370</i>	<i>8881</i>	<i>8683</i>	<i>8899</i>
<i>Հեռակա ուսուցում</i>	<i>2063</i>	<i>1809</i>	<i>1734</i>	<i>1878</i>	<i>2039</i>
Մագիստրատուրա	2419	2066	1666	1599	1837
<i>Առկա ուսուցում</i>	<i>1927</i>	<i>1618</i>	<i>1317</i>	<i>1304</i>	<i>1543</i>
<i>Հեռակա ուսուցում</i>	<i>492</i>	<i>448</i>	<i>349</i>	<i>295</i>	<i>294</i>
Ասպիրանտուրա	232	201	178	179	187
<i>Առկա ուսուցում</i>	<i>114</i>	<i>119</i>	<i>125</i>	<i>125</i>	<i>130</i>
<i>Հեռակա ուսուցում</i>	<i>118</i>	<i>82</i>	<i>53</i>	<i>54</i>	<i>57</i>
Օտարերկրյա ուսանողական համակազմը	234	222	279	318	278

Ընդհանուր ուսանողական համակազմը




2020/2021 ուսումնական տարվանից նկատելի է ԵՊՀ ընդհանուր ուսանողական համակազմի աստիճանական աճ: Բակալավրիատում ներգրավված է ընդհանուր ուսանողական համակազմի շուրջ 83, մագիստրատուրայում՝ միջինում 14, իսկ ասպիրանտուրայում՝ 1.5 տոկոսը: Օտարերկրյա ուսանողական համակազմը կազմում է ընդհանուրի շուրջ 2 տոկոսը:

Ցուցանիշ 1.11. Առկա ուսուցման մագիստրատուրա և ասպիրանտուրա ընդունվածների ու շրջանավարտների հարաբերակցությունը

	2020	2021	2022	2023	2024
Բակալավրիատի շրջանավարտներ	2538	2333	1406	2185	2048
Մագիստրատուրա ընդունված ուսանողներ	968	825	658	852	907
Մագիստրատուրա (հարաբերակցությունը (%))	38.1	35.4	46.8	39.0	44.3
Մագիստրատուրայի շրջանավարտներ	966	987	840	754	686
Ասպիրանտուրա ընդունվածներ	41	43	54	43	34
Ասպիրանտուրա (հարաբերակցությունը (%))	4.2	4.4	6.4	5.7	5.0


2020-2024 թվականներին բակալավրիատի շրջանավարտների և մագիստրատուրա ընդունված ուսանողների հարաբերության ցուցանիշը տատանվել է 35-44 տոկոսի միջակայքում: Նշված տարիների ընթացքում մագիստրատուրայի շրջանավարտների և ասպիրանտուրա ընդունվածների հարաբերությունը տատանվում է 4-6 տոկոսի միջակայքում:



Ցուցանիշ 1.12. Մագիստրոսական և ասպիրանտական համակազմերի հաշվեկշիռն ընդհանուր համակազմում

	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Ընդհանուր ուսանողական համակազմը	13527	12668	12738	12657	13240
Մագիստրոսական համակազմը	2419	2066	1666	1599	1837
Մագիստրատուրայի հաշվեկշիռը (%)	17.88	16.31	13.08	12.63	13.87
Ասպիրանտական համակազմը	232	201	178	179	187
Ասպիրանտուրայի հաշվեկշիռը (%)	1.72	1.59	1.40	1.41	1.41

2020/2021-2024/2025 ուսումնական տարիներին ընդհանուր ուսանողական համակազմում մագիստրոսական համակազմի հաշվեկշիռը կազմում է 12.63-17.88 տոկոս, իսկ ասպիրանտական համակազմինը՝ 1.40-1.72 տոկոս:



Ցուցանիշ 1.13. Ասպիրանտական համակազմ և հայցորդներ

	2020	2021	2022	2023	2024	2025
Առկա ուսուցմամբ ասպիրանտներ (ՀՀ քաղաքացիներ)	123	121	134	126	130	115
Հեռակա ուսուցմամբ ասպիրանտներ (ՀՀ քաղաքացիներ)	206	149	113	54	68	69
Օտարերկրյա ասպիրանտներ	10	14	13	14	13	13
Ասպիրանտներ	339	284	260	194	211	197
Հայցորդներ	49	74	127	154	156	197



2020-2025 թվականների ընթացքում նկատելի է ասպիրանտական համակազմի աստիճանական նվազում՝ շուրջ 42 տոկոս: Նույն ժամանակահատվածում արձանագրվել է հայցորդների թվի 44 տոկոս աճ:

Ցուցանիշ 1.14.1. Առկա ուսուցման օտարերկրյա ուսանողների համակազմը և հաշվեկշիռն առկա ուսուցման ուսանողական համակազմում

	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Առկա ուսուցման ուսանողական համակազմը	10833	10318	10570	10400	10823
Օտարերկրյա ուսանողների համակազմը, այդ թվում՝	225	231	262	288	275
Նախապատրաստական	12	20	15	20	11
Բակալավրիատ	151	141	164	188	214
Մագիստրատուրա	48	59	73	66	37
Ասպիրանտուրա	14	11	10	14	13
Օտարերկրյա սովորողների հաշվեկշիռն առկա ուսուցման ուսանողական համակազմում (%)	2.08	2.24	2.48	2.77	2.54

2020/2021-2024/2025 ուսումնական տարիներին առկա ուսուցման ուսանողական համակազմում արձանագրվել է օտարերկրյա ուսանողների թվի շուրջ 22 տոկոս աճ:

Օտարերկրյա սովորողների հաշվեկշիռն առկա ուսուցման ուսանողական համակազմում (%)



Ցուցանիշ 1.14.2. Հեռակա ուսուցման օտարերկրյա ուսանողների համակազմը և հաշվեկշիռը հեռակա ուսուցման ուսանողական համակազմում

	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Հեռակա ուսուցման ուսանողական համակազմը	2694	2350	2168	2257	2417
Օտարերկրյա ուսանողների համակազմը, այդ թվում՝	21	11	32	30	27
Բակալավրիատ	18	11	24	22	24
Մագիստրատուրա	3	0	8	8	3
Օտարերկրյա ուսանողների հաշվեկշիռն ընդհանուր համակազմում (%)	0.78	0.47	1.48	1.33	1.12

2020/2021-2024/2025 ուսումնական տարիներին օտարերկրյա ուսանողների հաշվեկշիռը հեռակա ուսուցման համակարգում կազմում է մեկ տոկոս:

Օտարերկրյա ուսանողների հաշվեկշիռն ընդհանուր համակազմում (%)



Ցուցանիշ 1.15. Հեռակա ուսուցման համակազմը և հաշվեկշիռն ընդհանուր ուսանողական համակազմում

	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Ընդհանուր ուսանողական համակազմը	13527	12668	12738	12657	13240
Հեռակա ուսուցման ուսանողական համակազմը	2694	2350	2168	2257	2417
Հեռակա ուսուցման հաշվեկշիռն ընդհանուր համակազմում (%)	19.9	18.6	17.0	17.8	18.3

Վերջին հինգ ուսումնական տարիների ընթացքում հեռակա ուսուցման համակազմի հաշվեկշիռը կազմում է ընդհանուր ուսանողական համակազմի 17-20 տոկոսը:

Հեռակա ուսուցման հաշվեկշիռն ընդհանուր համակազմում (%)




Ցուցանիշ 1.16.1. Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռն ընդունելության ծավալում՝ ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի

	2020	2021	2022	2023	2024
Ընդունելության ընդհանուր ծավալը	4314	3739	3617	3913	4038
Բակալավրիատ (վճարովի համակարգ)	2592	2452	2189	2247	2300
Առկա	2280	2169	1927	1897	1929
Հեռակա	312	283	262	350	371
Մագիստրատուրա (վճարովի համակարգ)	841	667	482	682	775
Առկա	668	522	367	566	615
Հեռակա	173	145	115	116	160
Ասպիրանտուրա (վճարովի համակարգ)	4	31	9	5	6
Առկա	2	3	7	3	2
Հեռակա	2	28	2	2	4
Օտարերկյա քաղաքացիներ	84	73	74	103	93
Ընդամենը վճարովի	3521	3223	2754	3037	3174
Հաշվեկշիռն ընդունելության ծավալում (%)	82	86	76	78	79

2020-2024 թվականներին ընդունելության ընդհանուր ծավալում վճարովի համակարգ ընդունված ուսանողների հաշվեկշիռը կազմում է 76-86 տոկոս:

Հաշվեկշիռն ընդունելության ծավալում (%)




Ցուցանիշ 1.16.2. Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռն ընդհանուր ուսանողական համակազմում՝ ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի

	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Ընդհանուր ուսանողական համակազմը	13527	12668	12738	12657	13240
Բակալավրիատ	9010	8634	8918	8687	8976
Առկա	6959	6837	7205	6838	6956
Հեռակա	2051	1797	1713	1849	2020
Մագիստրատուրա	1698	1426	1043	1041	1273
Առկա	1209	990	701	751	981
Հեռակա	489	436	342	290	292
Ասպիրանտուրա	34	39	43	44	22
Առկա	2	5	8	13	11
Հեռակա	32	34	35	31	11
Օտարերկրյա քաղաքացիներ	195	181	232	288	278
Ընդամենը վճարովի	10937	10280	10236	10060	10549
Ընդհանուր ուսանողական համակազմում (%)	81	81	80	79	80

Վերջին ուսումնական տարիներին վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռը կազմել է ընդհանուր ուսանողական համակազմի 79-81 տոկոսը:

Ընդհանուր ուսանողական համակազմում (%)



Բնագավառ 2. Կրթական գործընթաց

Ցուցանիշ 2.1. Առկա ուսուցման առաջին կուրսից երկրորդ կուրս փոխադրման տոկոսը	28
Ցուցանիշ 2.2. Շրջանավարտների թիվն ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի	29
Ցուցանիշ 2.3. Հիմնական դասախոսական կազմը.....	30
Ցուցանիշ 2.4. Դասախոսական կազմի բաշխումն ըստ աշխատանքային պայմանագրի ձևերի (հիմնական, համատեղություն, ժամավճար).....	31
Ցուցանիշ 2.5. Դասախոսական կազմի տարեկան համալրումը	32
Ցուցանիշ 2.6. Դասախոսական հաստիքների և ընդհանուր դասախոսական կազմի հարաբերակցությունը	33
Ցուցանիշ 2.7. Հիմնական դասախոսական կազմի տարիքային բաշխումը	34
Ցուցանիշ 2.8. Որակավորման բարձրացման ծրագրերին մասնակցած հիմնական դասախոսների թվի և հիմնական դասախոսական կազմի հարաբերակցությունը	35
Ցուցանիշ 2.9. Արական և իգական սեռի հիմնական դասախոսների հաշվեկշիռը հիմնական դասախոսական կազմում.....	36
Ցուցանիշ 2.10. Ուսանող/դասախոս (լրիվ հաստիքային համարժեքով) հարաբերակցությունը	37
Ցուցանիշ 2.11. Ընդհանուր ուսանողական համակազմի և ուսումնաօժանդակ կազմի հարաբերակցությունը	38
Ցուցանիշ 2.12. Դասախոսների ուսումնական բեռնվածությունն ըստ ուղղությունների և ժամերի.....	39
Ցուցանիշ 2.13. Դասախոսների ժամերի բաշխվածությունն ըստ տեսակների.....	40
Ցուցանիշ 2.14. Դասախոսի տարեկան ուսումնական միջին բեռնվածությունն ըստ ուղղությունների.....	41
Ցուցանիշ 2.15. 100 դասախոսի հաշվարկով ուսումնամեթոդական հրատարակությունների թիվը.....	42
Ցուցանիշ 2.16. ՄՈԳ-ն ըստ կրթական աստիճանների և ուղղությունների	43
Ցուցանիշ 2.17. Ուսանողների հարցման միջին գնահատականներն ըստ ուղղությունների	44


Ցուցանիշ 2.1. Առկա ուսուցման առաջին կուրսից երկրորդ կուրս փոխադրման տոկոսը

	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Բակալավրիատ (%)	82.44	82.53	78.96	79.72	85.27
Մագիստրատուրա (%)	93.57	85.69	92.20	86.16	87.07

2020/2021-2024/2025 ուսումնական տարիների ընթացքում բակալավրիատում առաջինից երկրորդ կուրս անցումը կազմում է 79-85 տոկոս: Մագիստրատուրայում նշված ցուցանիշը տատանվում է 85-93 տոկոսի սահմաններում:


Ցուցանիշ 2.2. Շրջանավարտների թիվն ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի

	2020	2021	2022	2023	2024
Շրջանավարտների թիվը	4388	4110	2937	3440	3373
Բակալավրիատ	3106	2854	1814	2464	2451
<i>Առկա ուսուցում</i>	2538	2333	1406	2185	2048
<i>Հեռակա ուսուցում</i>	568	521	408	279	403
Մագիստրատուրա	1170	1154	1034	904	834
<i>Առկա ուսուցում</i>	966	987	840	754	686
<i>Հեռակա ուսուցում</i>	204	167	194	150	148
Ասպիրանտուրա	112	102	89	72	88
<i>Առկա ուսուցում</i>	23	38	41	37	49
<i>Հեռակա ուսուցում</i>	89	64	48	35	39



Ցուցանիշ 2.3. Հիմնական դասախոսական կազմը


	2020/21		2021/22		2022/23		2023/24		2024/25	
Պրոֆեսոր	160	14.4%	150	14.7%	149	15.2%	142	14.8%	131	14.0%
Դոցենտ	484	43.4%	474	46.4%	462	47.0%	465	48.5%	474	50.7%
Ասիստենտ և դասախոս	470	42.2%	397	38.9%	371	37.8%	352	36.7%	329	35.2%
Ընդամենը	1114		1021		982		959		934	
Այդ թվում՝ գիտ. աստիճան ունեցող	789	70.8%	751	73.6%	726	73.9%	714	74.5%	694	74.3%



2020/2021-2024/2025 ուսումնական տարիների ընթացքում նկատելի է հիմնական դասախոսական կազմի թվի նվազում: Չնայած այս հանգամանքին՝ նկատելի է դոցենտների թվի ավելացում, որը 2024/2025 ուսումնական տարում կազմում է հիմնական դասախոսական կազմի շուրջ 51 տոկոսը: Նշված ժամանակահատվածում կայուն է նաև պրոֆեսորների բաժնեմասը՝ շուրջ 14 տոկոս: Գիտական աստիճան ունեցող դասախոսները կազմում են հիմնական դասախոսական կազմի 71-74 տոկոսը:

Ցուցանիշ 2.4. Դասախոսական կազմի բաշխումն ըստ աշխատանքային պայմանագրի ձևերի (հիմնական, համատեղություն, ժամավճար)

	2020/21		2021/22		2022/23		2023/24		2024/25	
Հիմնական	1114	67.8%	1021	67.8%	982	67.2%	959	57.5%	934	52.3%
Ներքին (վարչական)	32	1.9%	24	1.6%	22	1.5%	25	1.5%	29	1.6%
Արտաքին համատեղություն	212	12.9%	211	14.0%	207	14.2%	224	13.4%	241	13.5%
Արտաքին ժամավճար	285	17.3%	249	16.5%	250	17.1%	460	27.6%	581	32.5%
Ընդամենը	1643		1505		1461		1668		1785	



Վերջին հինգ ուսումնական տարիների ընթացքում շուրջ 16 տոկոսով նվազել է հիմնական դասախոսական կազմը, սակայն նույն ժամանակահատվածում շուրջ երկու անգամ աճել է արտաքին ժամավճարային հիմունքներով ներգրավված դասախոսների թիվը: Այս հանգամանքը պայմանավորված է դասավանդման գործընթացում ինչպես տարբեր մասնագիտական ոլորտներից, այնպես էլ աշխատաշուկայից համապատասխան մասնագետների ներգրավմամբ:

Ցուցանիշ 2.5. Դասախոսական կազմի տարեկան համալրումը

	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Դասախոսական կազմի տարեկան համալրումը	29	32	29	28	32
Այդ թվում՝ ասպիրանտուրայից	5	5	6	6	7

2020/2021-2024/2025 ուսումնական տարիներին դասախոսական կազմի համալրումը կազմում է 28-32: Նույն ժամանակահատվածում դեռևս ցածր է ասպիրանտուրայից տարեկան համալրման ցուցանիշը:




Ցուցանիշ 2.6. Դասախոսական հաստիքների և ընդհանուր դասախոսական կազմի հարաբերակցությունը

	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Ընդհանուր դասախոսական կազմ	1326	1232	1189	1183	1175
Դասախոսական հաստիքներ	910.75	856.75	846.25	811.25	926
Հարաբերակցությունը	0.69	0.70	0.71	0.69	0.79

Վերջին հինգ ուսումնական տարիների ընթացքում ընդհանուր դասախոսական կազմի և դասախոսական հաստիքների հարաբերակցությունը գտնվում է 0.69-0.79-ի միջակայքում:

Հարաբերակցությունը



Ցուցանիշ 2.7. Հիմնական դասախոսական կազմի տարիքային բաշխումը

	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Մինչև 35 տարեկան	126	108	85	86	56
35-65 տարեկան	723	688	664	641	621
65-ից բարձր	265	225	233	232	264
Ընդամենը	1114	1021	982	959	934
Միջին տարիք	52.5	48.9	48.3	47.7	47.7

Վերջին հինգ ուսումնական տարիների ընթացքում նկատելի է հիմնական դասախոսական կազմի միջին տարիքի նվազում՝ 52.5-ից 47.7:

Դասախոսական կազմի միջին տարիքը




Ցուցանիշ 2.8. Որակավորման բարձրացման ծրագրերին մասնակցած հիմնական դասախոսների թվի և հիմնական դասախոսական կազմի հարաբերակցությունը

	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Հիմնական դասախոսական կազմը	1114	1021	982	959	934
Որակավորման բարձրացում անցած հիմնական դասախոսների թիվը	903	110	81	94	222
Հարաբերակցությունը	81.1	10.8	8.2	9.8	23.8

2020/2021-ին և նախորդ բոլոր ուսումնական տարիներին դասախոսների որակավորման ծրագրերը եղել են պարտադիր: 2021/2022-ից նշված ծրագրերն իրականացվում են կամավորության սկզբունքով, և ինչպես նկատելի է, որակավորման բարձրացում անցած հիմնական դասախոսների թիվը նվազել է: Որոշակի աճ է գրանցվել 2024/2025 ուսումնական տարում. կազմելով հիմնական դասախոսական կազմի 23.8 տոկոսը:

Որակավորման բարձրացում անցած հիմնական դասախոսների թվի և հիմնական դասախոսական կազմի հարաբերակցությունը



Ցուցանիշ 2.9. Արական և իգական սեռի հիմնական դասախոսների հաշվեկշիռը հիմնական դասախոսական կազմում

	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Հիմնական դասախոսական կազմ	1114	1021	982	959	934
Արական սեռի հիմնական դասախոսների թիվը	478	416	393	388	371
Իգական սեռի հիմնական դասախոսների թիվը	636	605	589	571	563
Արական սեռի հաշվեկշիռը (%)	43	41	40	40	40
Իգական սեռի հաշվեկշիռը (%)	57	59	60	60	60




2020/2021-2024/2025 ուսումնական տարիների ընթացքում հիմնական դասախոսական կազմում նկատելի է արական սեռի դասախոսների հաշվեկշիռի նվազում՝ 43-ից 40 տոկոս, իսկ իգական սեռի հաշվեկշիռն աճել է՝ կազմելով 60 տոկոս:

Ցուցանիշ 2.10. Ուսանող/դասախոս (լրիվ հաստիքային համարժեքով) հարաբերակցությունը

	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Ընդհանուր ուսանողական համակազմը	13527	12668	12738	12657	13240
Դասախոսական հաստիքներ	910.75	856.75	846.25	811.25	926
Ուսանող/դասախոս հարաբերակցությունը	14.9	14.8	15.1	15.6	14.3

2020/2021-2024/2025 ուսումնական տարիների ընթացքում ուսանող/դասախոս հարաբերակցությունը գտնվում է 14.3-15.6-ի միջակայքում:

Ուսանող/դասախոս հարաբերակցությունը




Ցուցանիշ 2.11. Ընդհանուր ուսանողական համակազմի և ուսումնաօժանդակ կազմի հարաբերակցությունը

	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Ընդհանուր ուսանողական համակազմը	13527	12668	12738	12687	13240
Ուսումնաօժանդակ կազմը	346	328	322	223	239
Ուսանող/ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցությունը	39.1	38.6	39.6	56.9	55.4

2020/2021-2022/2023 ուսումնական տարիներին ուսանող/ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցությունը կազմել է շուրջ 39 տոկոս: 2023/2024-2024/2025 ուսումնական տարիներին նշված ցուցանիշը կազմել է 55-57 տոկոս՝ պայմանավորված ուսումնաօժանդակ կազմի թվաքանակի նվազմամբ:

Ուսանող/ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցությունը



Ցուցանիշ 2.12. Դասախոսների ուսումնական բեռնվածությունն ըստ ուղղությունների և ժամերի


	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Հումանիտար մասնագիտություններ	254270	230910	224008	216773	219126
Հասարակագիտական մասնագիտություններ	225157	209679	206321	218919	221279
Ճշգրիտ մասնագիտություններ	117396	117779	118924	121510	119403
Բնագիտական մասնագիտություններ	77173	73564	68182	70969	69813
Համահամալսարանական ամբիոններ	21498	20638	18558	15965	15913
Ընդամենը	695494	652570	635993	644136	645534

2024/2025 ուսումնական տարում 2020/2021-ի համեմատ ժամաքանակը նվազել է շուրջ 50 000 ժամով: Այս նվազումը նկատելի է բոլոր ուղղություններով. հումանիտար մասնագիտությունների գծով այդ նվազումը կազմել է 35144 ժամ, հասարակագիտական՝ 3878 ժամ, ճշգրիտ՝ 2007 ժամ, բնագիտական՝ 7360 ժամ: 2020/2021-2024/2025 ուսումնական տարիների ընթացքում շուրջ 6000 ժամով նվազել է նաև համահամալսարանական ամբիոնների դասախոսների ուսումնական բեռնվածությունը:



Ցուցանիշ 2.13. Դասախոսների ժամերի բաշխվածությունն ըստ տեսակների

	2020/21		2021/22		2022/23		2023/24		2024/25	
Լսարանային	396529	57.0%	390961	59.9%	378561	59.0%	355111	55.1%	345499	53.5%
Աշխատանքների ղեկավարման	134653	19.4%	108774	16.7%	113989	17.8%	111173	17.3%	117339	18.2%
Գիտելիքների ստուգման	108347	15.6%	109706	16.8%	104480	16.3%	101764	15.8%	107554	16.7%
Պրակտիկայի	28117	4.0%	19895	3.0%	21983	3.4%	22163	3.4%	22143	3.4%
Հետազոտական աշխատանք	0	0.0%	0	0.0%	0	0.0%	24244	3.8%	22293	3.5%
Կրթական ծրագրի ղեկավար	5620	0.8%	5660	0.9%	5600	0.9%	8580	1.3%	8600	1.3%
Այլ	22228	3.2%	17574	2.7%	17469	2.7%	21101	3.3%	22106	3.4%
Ընդամենը	695494		652570		642082		644136		645534	




2020/2021-2024/2025 ուսումնական տարիների ընթացքում կատարված ուսումնական գործընթացների բարեփոխումների արդյունքում՝ դասախոսների ընդհանուր ուսումնական բեռնվածությունը նվազել է 7 տոկոսով, ընդ որում՝ լսարանային բեռնվածությունն աճել է շուրջ 13 տոկոսով: 2023/2024 ուսումնական տարվանից «ԵՊՀ դասախոսական կազմի ուսումնական և ուսումնամեթոդական բեռնվածության հաշվարկի նորմերում» ներառվել է նաև հետազոտական աշխատանքին հատկացվող ժամաքանակը:

Ցուցանիշ 2.14. Դասախոսի տարեկան ուսումնական միջին բեռնվածությունն ըստ ուղղությունների

	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Հումանիտար մասնագիտություններ	705	706	704	707	715
Հասարակագիտական մասնագիտություններ	706	714	705	706	717
Ճշգրիտ մասնագիտություններ	826	811	706	711	726
Բնագիտական մասնագիտություններ	687	694	703	704	696
Համահամալսարանական ամբիոններ	756	736	713	707	750
Համալսարանական միջին բեռնվածություն	708	709	711	704	715

2020/2021-2024/2025 ուսումնական տարիներին դասախոսների միջին բեռնվածությունը տատանվել է 704-715 ժամի սահմաններում:



Ցուցանիշ 2.15. 100 դասախոսի հաշվարկով ուսումնամեթոդական հրատարակությունների թիվը

	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Ուսումնամեթոդական նյութերի քանակը	29	38	34	22	27
Հիմնական դասախոսական կազմ	1114	1021	982	959	934
100 դասախոսի հաշվարկով ուսումնամեթոդական հրատարակությունների թիվը	2.6	3.7	3.5	2.3	2.9

Վերջին հինգ ուսումնական տարիների ընթացքում ուսումնամեթոդական հրատարակությունների թիվը տատանվել է 22-38-ի սահմաններում: Ըստ այդմ՝ հարյուր դասախոսի հաշվարկով ուսումնամեթոդական հրատարակությունների թիվը 2.3-3.7 է:

100 դասախոսի հաշվարկով ուսումնամեթոդական հրատարակությունների թիվը



Ցուցանիշ 2.16. ՄՈԳ-ն ըստ կրթական աստիճանների և ուղղությունների

	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Բակալավրիատ					
Հումանիտար մասնագիտություններ	15.20	15.22	15.08	15.74	15.74
Հասարակագիտական մասնագիտություններ	13.77	13.74	14.32	14.38	14.38
Ճշգրիտ մասնագիտություններ	12.44	12.16	13.03	12.96	12.96
Բնագիտական մասնագիտություններ	13.18	12.69	13.11	13.23	13.23
Մագիստրատուրա					
Հումանիտար մասնագիտություններ	18.24	16.79	16.79	18.08	18.08
Հասարակագիտական մասնագիտություններ	17.62	16.24	16.39	17.62	17.62
Ճշգրիտ մասնագիտություններ	17.92	15.09	15.22	16.99	16.99
Բնագիտական մասնագիտություններ	17.54	15.60	15.78	16.97	16.97

2020/2021-2024/2025 ուսումնական տարիների ընթացքում և՛ բակալավրիատում, և՛ մագիստրատուրայում ուսանողների միջին որակական գնահատականը (ՄՈԳ) բարձր է հումանիտար մասնագիտությունների գծով. բակալավրիատում այն տատանվում է 15.08-15.74-ի սահմաններում, իսկ մագիստրատուրայում՝ 16.79-18.24-ի միջակայքում: Նույն ժամանակահատվածում բակալավրիատում ու մագիստրատուրայում հասարակագիտական և բնագիտական մասնագիտությունների գծով ուսանողների ՄՈԳ-ը համապատասխանաբար տատանվում է 12.69-14.38-ի ու 15.60-17.62-ի սահմաններում: Ճշգրիտ մասնագիտություններում ՄՈԳ-ը համեմատաբար ցածր է. բակալավրիատում այն կազմում է 12.16-12.96, իսկ մագիստրատուրայում՝ 15.09-17.92:

Ցուցանիշ 2.17. Ուսանողների հարցման միջին գնահատականներն ըստ ուղղությունների

	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Հումանիտար մասնագիտություններ	4.75	4.71	4.72	4.58	4.70
Հասարակագիտական մասնագիտություններ	4.76	4.70	4.66	4.68	4.67
Ճշգրիտ մասնագիտություններ	4.57	4.33	4.37	4.21	4.36
Բնագիտական մասնագիտություններ	4.74	4.64	4.51	4.61	4.63
Համահամալսարանական ամբիոններ	4.78	4.62	4.64	4.64	4.61
ԵՊՀ միջին գնահատականը	4.74	4.68	4.65	4.65	4.71

ԵՊՀ-ում ուսումնական գործընթացի շարունակական բարելավման նպատակով իրականացվում են տարբեր հարցումներ, որոնցից մեկը դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների համակարգն է: Ուսանողների կողմից դասախոսական կազմի գնահատման մեխանիզմի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հարցման մեթոդաբանությունը, ընթացակարգն ու չափանիշները պարբերաբար լրամշակվում և կատարելագործվում են: 2020/2021-2024/2025 ուսումնական տարիներին ուսանողների հարցման միջին գնահատականը բոլոր ուղղություններով գտնվում է 4.2-4.7-ի սահմաններում (գնահատման 5-բալանոց համակարգում):

Բնագավառ 3. Ռեսուրսներ և կառավարում


Ցուցանիշ 3.1. Աշխատողների ընդհանուր հաստիքների թիվը, ուսանող/աշխատող հարաբերակցությունը	46
Ցուցանիշ 3.2. Դասախոսական կազմ/ոչ դասախոսական կազմ (լրիվ հաստիքային համարժեքով) հարաբերակցությունը	47
Ցուցանիշ 3.3. Տարեկան եկամուտներ (հզ. դր.)	48
Ցուցանիշ 3.4. Եկամուտներ/ուսանող և ծախսեր/ուսանող հարաբերակցությունները (հզ. դր.)	49
Ցուցանիշ 3.5. Դրամական միջոցների մնացորդը տարեսկզբին և տարեվերջին (հզ. դր.)	50
Ցուցանիշ 3.6. ՀՀ պետական բյուջեից ստացված եկամուտների և ոչ պետական պատվերով եկամուտների հարաբերությունը ընդհանուր եկամուտներին (հզ. դր.)	51
Ցուցանիշ 3.7. Ուսումնական ծախսերի հաշվեկշիռն ընդհանուր ծախսերում և մեկ ուսանողին բաժին ընկնող ուսումնական ծախսերը	52
Ցուցանիշ 3.8. Ուսման միջին վարձաչափը (հզ. դր.)	53
Ցուցանիշ 3.9. Դասախոսական կազմի միջին աշխատավարձը և հարաբերությունը ՀՀ միջին աշխատավարձին (ՀՀ դրամ)	54
Ցուցանիշ 3.10. Աշխատավարձ/տարեկան ընդհանուր ծախսեր հարաբերակցությունը (հզ. դր.)	55
Ցուցանիշ 3.11. Հարկերի ծավալ/եկամուտներ պետական բյուջեից հարաբերակցությունը (հզ. դր.)	56

Ցուցանիշ 3.1. Աշխատողների ընդհանուր հաստիքների թիվը, ուսանող/աշխատող հարաբերակցությունը

	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25
Աշխատողների ընդհանուր հաստիքների թիվը	2176	2125	2130	2062	2037
Ընդհանուր ուսանողական համակազմը	13527	12668	12738	12657	13240
Ուսանող/աշխատող հարաբերակցությունը	6.2	6.0	6.0	6.1	6.5

